

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Խ.Արքովյանի անվան ՀՊՄՀ հայ գրականության
և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

ՎԱՐԴԱՆ ԴԻՎԱՆԱԴՊՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

«Սրբոյ վարդապետի յոքներանեան մենաւորի Գրիգորի համառօտիւք բան խրատու վասն ուղիղ հաւատոյ և մաքուր վարուց առաքինութեան՝ ի խնդրոյ նորին հարազատի Վարդանայ դիւանադարի» (այսուհետև՝ «Խրատ») խորագրով երկը, որ ըստ Հայ Առաքելական Եկեղեցու դավանաբանության՝ ճշմարիտ հավատքի ու առաքինի վարքի սկզբունքների շարադրանք է, ձեռագիր աղբյուրները համարում են «յոքներանեան մենաւոր Գրիգորի»¹ կամ ուղղակի Գրիգոր վարդապետի² ստեղծագործությունը։ Գրիգորն այդ երկը գրել է իր «հարազատ» Վարդան դիւանադարի խնդրանքով։

Ամենահին՝ 1281 թ. Հաղբատում գրված ձեռագիրն ունի «Բան համառօտ վասն ուղիղ հաւատոյ»՝ հեղինակի անուն չունեցող խորագիրը³։

ԺԴ դարում օրինակված ՄՄ 581 և 2178 ձեռագրերում, որոնք պահպանված և մեզ հասած՝ վաղեմությամբ երկրորդ և երրորդ ձեռագրերն են, «Խրատը» վերագրված է Գրիգոր Սկևռացուն⁴։ Ձեռագրական այս տվյալն, ըստ երևույթին, հիմնված է առավել հին մի ավանդույթի վրա։ Ստորև տեսնելու ենք, որ, ինչպես ժամանակին նկատվել է, այս փաստը, ինչպես նաև «Խրատ»ի՝ Գրիգոր Սկևռացու երկերի հետ ունեցած գաղափարական և ռճական նմանությունները թույլ են տվել վերոհիշյալ երկը վերագրելու Գրիգոր Սկևռացուն։

ԺԵ դարից սկսած՝ ձեռագրերում «Խրատը» վերագրվել է Գրիգոր Նարեկացուն⁵։

¹ Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) ձեռ. 2678. էջ 25ա-34բ (1426-1476 թթ., գրչ. վայր՝ անհայտ, գրիչ՝ Մատթեոս), Պոլսի Ղալաթիո Ազգային Մատենադարանի ձեռ. 105 (1713 թ., գրչ. վայրը՝ անհայտ, գրիչ՝ Իգնատիոս վրդ., տե՛ս Բ. Կիլևսեքեան, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանի հայոց, Մնթիվիաս, 1961 թ., էջ 669)։

² ՄՄ ձեռ. 1217. էջ 33ա-55ա (1734 թ. գրչ. վայր՝ Երուսաղեմ, գրիչ՝ Աբրահամ Բյուզանդացի), Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ձեռ. 1105 (1409 թ., գրչ. վայր՝ Երզնկայի Ավագ վանք, գրիչ՝ Ղազար կրոնավոր, տե՛ս Ն. Պողաթյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց, հ. Դ, Երուսաղեմ, 1967 թ., էջ 157. ՄՄ ձեռ. 576. էջ 165ա-194ա (1687-ից առաջ, գրչ. վայր՝ անհայտ, գրիչ՝ Գրիգոր, Պետրոս)։

³ ՄՄ ձեռ. 1324. էջ 361ա-377բ (1281 թ. գրչ. վայր՝ Հաղպատ, գրիչ՝ Հովհան, Բարսեղ)։

⁴ ՄՄ ձեռ. 581. էջ 265ա-314բ (1371 թ., գրչ. վայր՝ և գրիչ՝ անհայտ)։ Այս ձեռագրում «Խրատը» ունի հետևյալ վերնագիրը. «Սրբոյ վարդապետի յոքներանեան մենաւորի Գրիգորի Սկևռացոյ...»։ ՄՄ. ձեռ. 2178. էջ 112բ-137բ (1321 թ. գրչ. վայր՝ Տաթև, գրիչ՝ Հակոբ), վերնագիրն է «Դաւանութիւն Գրիգորի վարդապետի Սկևռացոյ ասացեալ»։

⁵ ՄՄ. ձեռ. 502. էջ 234բ-277ա (1619 թ., գրչ. վայր՝ Լվով, գրիչ՝ Հովհաննես)։

ՄՄ. ձեռ. 577. էջ 213ա-253ա (1695թ., գրչ. վայր՝ Ստեփանոս Նախավկայի վանք, գրիչ՝ Հակոբ)։

ՄՄ. ձեռ. 3087. էջ 1ա-24բ (ԺԵ դ., գրիչ և գրչ. վայր՝ անհայտ)։

ՄՄ. ձեռ. 3961. էջ 39ա-40բ (ԺԵ դ., գրիչ և գրչ. վայր՝ անհայտ)։

Այս հանգամանքի հիման վրա էլ գերմանացի հայագետ Յոհան Շրոյդերի «Արամեան լեզուի գանձ» աշխատության (Ամստերդամ, 1711 թ.) մեջ «Խրատը» հատվածաբար տպագրվել է որպես Գր. Նարեկացու ստեղծագործություն⁶: «Խրատի» ամբողջական տպագրությունը 1763 թվականին իրականացրել է Կ. Պոլսի պատրիարք Հ. Նալբանդ⁷:

Հ. Զոհրապյանը, 1794 թ. նույն երկը ընդօրինակելով Կ. Պոլսի պատրիարքարանի թիվ 87 գրչագրից, նկատել և կասկածի տակ է առել «Խրատի» Գր. Նարեկացու հեղինակություն լինելը և թեաքար այն վերագրել է նրա անվանակից Գր. Սկևռացուն. «Երեւի լինէր Գրիգորի Սկևռացոյ»⁸:

Հ. Զոհրապյանին հետևելով՝ Նոր Հայկազյան բառարանի հեղինակները, չնայած «Խրատը» Գր. Նարեկացուն վերագրելը չեն մերժել, բայց նաև չեն հերքել, որ Գր. Սկևռացին կարող է լինել «Խրատի» հեղինակ: Այս երկի հեղինակային պատկանելության հարցը լուծելու համար նրանք առաջադրել են Վարդան դիվանադարի ինքնության պարզաբանման հարցը. «...թէ ո՞ր իցէ և յորում ժամանակի Վարդան դիվանադարին, որ եղել խնդրող գեղեցիկ վարդապետութեանս»⁹:

1840 թ. Սուքիաս վ. Սումալն իրականացրել է Գր. Նարեկացու երկերի վենետիկյան հրատարակությունը: Նա, առանց հեղինակի անունը հիշատակելու, «Խրատը» զետեղել է գրքի վերջում: Բազմաձևաձև հայագետը տողատակի ծանոթագրության մեջ կասկածի է ենթարկել Գր. Նարեկացու հեղինակության խնդիրը՝ պատճառաբանելով, որ նախ՝ Նարեկացու Հայսմավուրքային վարքում, ուր մեկ առ մեկ թվարկված են նրա երկերը, «Խրատը» չի հիշատակվում, և ապա՝ «Խրատը» իր ոճով խորթ է Նարեկացուն և հարազատ է Գր. Սկևռացու «Աղօթագրքի» ոճին. «Բիւզանդացոց տպագիրք յանուն Նարեկացոյ մակագրեն զճառս զայս յարեցաք ընդ աներկբայ առ ի նմանէ մատենագրեալսն... ի թուիս իբր ԹՃԾ. ... Այլ թէ անշուշտ նորին երանելոյ իցէ մատենագրեալ ճառս, ի նախնեաց որ ինչ ցարդ առ մեզ գտանին վէպք, չունինք ասել հաւաստեալ և ի վարս նորա ի «Յայսմավուրս» ի մեհեկի ԻԱ. (21) մի ըստ միոջէ թուեալ ամենայն գրութիւնք նորա, զառաջիկայ ճառեղ չիշատակի ինչ բնաւ: Նմին իրի և առ մեօք թուեցաւ ոմանց Գրիգորի Սկևռացոյն արարեալ զսա. թերեւս այնու, զի ազգակից է ոճոյ աղօթագրոց Սկևռացոյն ի նոյն օրինակ զանազանութեան միոյ միոյ յախտից և յուղղութեանց, անդ խոստովանօրէն մաղթանօք անցեալ ընդ բնաւսն աստ խրատական բանիւ, և կամ զի իմաստասիրական ոճ այսր ճառի չմիաբանիցի Նարեկացոյ քերթողական ոճոյն»¹⁰:

Ն. Պողարյանը առանց կասկածի «Խրատը» վերագրել է Գր. Սկևռացուն՝ այն հի-

ՄՄ. ձեռ. 8697. էջ 1ա-45բ (ԺԷ դ., գրիչ և գրչ. վայր՝ անհայտ).

Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի ձեռ. 21, (ԺԸ դար, տե՛ս Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա, 1895 թ., էջ 134):

⁶ Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, 1840 թ., Վենետիկ, էջ 483, ծանոթագրություն է

⁷ Գիրք աղօթից, արարեալ Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հրեշտակական վարդապետի, Կ. Պոլիս, 1763, էջ 463-526:

⁸ Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի ձեռ. 1310, տե՛ս Հ. Սահակ վրդ. Զեմճեմյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց, ի Վենետիկ, հ. Զ., Վենետիկ, 1996 թ., էջ 599:

⁹ Նոր Բաղդիրք Հայկազեան լեզուի, Երևան, 1972, հ. Ա., էջ 11:

¹⁰ Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, 1840, Վենետիկ, էջ 483, ծանոթագրություն:

մամբ, որ Գր. Սկևռացին Վարդան դիվանադարի խնդրանքով գրել է նաև՝ «Բան գովեստի սուրբ կուսին Մարիամու» ներբողը¹¹:

Վիճահարույց այս հարցը Հ. Անասյանը ևս լուծել է Գրիգոր Սկևռացու օգտին՝ գտնելով, որ «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ» (կամ «Դաւանութիւն») ¹² գործը սխալմամբ է վերագրվել Գրիգոր Նարեկացուն¹³:

Պ. Խաչատրյանը, քննության առնելով Գր. Նարեկացու ստեղծագործությունները, նկատել է, որ «Խրատը» Գր. Նարեկացուն վերագրվել է պատահականորեն, առանց լուրջ հիմնավորման: Նրա կարծիքով այն վերագրելի է Գրիգոր Մեծ Վկայասերին¹⁴:

Ընդհանրապես հայ միջնադարյան մատենագրության մեջ Գրիգորների և Վարդանների ինքնության, ապրած ժամանակի, այս անուններով երկերի հեղինակային պատկանելության խնդիրները շատ բարդ ու խճճված են և բազմիցս բանասիրական քննության նյութ են եղել:

«Խրատի» հեղինակ Գրիգոր մենավորի և պատվիրատու Վարդան դիվանադարի վերաբերյալ ևս եղել են տարբեր տեսակետներ:

«Խրատի» հեղինակ համարվել են՝

ա) Գրիգոր Նարեկացին (Ժ դ.).

բ) Գրիգոր Մեծ Վկայասերը (ԺԱ դ.).

գ) Գրիգոր Սկևռացին (ԺԲ-ԺԳ դդ.):

Ըստ այսմ էլ ենթադրվել է Վարդան դիվանադարի ինքնությունը և ապրած ժամանակաշրջանը.

ա) Վարդանը ապրել է Ժ դարում, համարվել է Արծրունյաց Սենեքերիմ թագավորի դիվանադարի և Գր. Նարեկացու հարազատ եղբայրը.

բ) Վարդանը ապրել է ԺԱ-ԺԲ դարերում, եղել է Գրիգոր Մեծ Վկայասերի կաթողիկոսարանի դիվանադարի, նույնացվել է Վարդան Հայկազնի հետ, որը Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի մահվան առիթով նրա հիշատակին գրել է «Տաղ գերեզմանական...» վերնագրով ողբը:

Առաջին տեսակետը գիտական շրջանառության մեջ է դրել Հ. Նալյանը: Նկատի ունենալով խորագրի «հարազատ» բառը՝ նա Գր. Նարեկացուն և Վարդանին համարել է համահայր եղբայրներ, ուստի և ըստ նրա՝ Վարդանը Սենեքերիմ թագավորի դիվանադարին էր¹⁵:

Մ. Չամչյանը կրկնել է Հ. Նալյանին՝ Վարդանին համարելով Նարեկացու ազգականը և Սենեքերիմ Արծրունու դիվանադարի. «Արար դարձեալ և գիրահանգութիւն հաւատոյ և վարուց ի խնդրոյ ազգականին իւրոյ Վարդանայ՝ որ էր դիւանադարի Սենեքերիմայ արքային Արծրունեաց»¹⁶:

¹¹ Ն. Պողոթյան, Հայ գրողներ (Ե-ԺԵ դդ.), Երուսաղեմ, 1971, էջ 272:

¹² Ձեռագրերում «Խրատը» հանդիպում է նաև «Դաւանութիւն» վերնագրով, ՄՄ ձեռ. 2178, ՄՄ ձեռ. 1217:

¹³ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Երևան, 1976, հ. Բ, էջ 284:

¹⁴ Պ. Խաչատրյան, Նարեկացին և հայ միջնադարը, Երևան, 1996, էջ 137:

¹⁵ Տե՛ս Գիրք աղօթից, արարեալ Սրբոյ Գրիգորի Նարեկացոյ, Կ. Պոլիս, 1782, էջ 460-461:

¹⁶ Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Երևան, 1984, հ. II, էջ 853:

Հ. Աճառյանը ևս Վարդանին և Գրիգորին համարում է եղբայրներ. «...Վարդան դիվանադպիր՝ եղբայր Գրիգոր Նարեկացու»¹⁷:

Ինչպես հայտնի է Գրիգոր Նարեկացու վարքից, նա ունեցել է միայն Սահակ և Հովհաննես անուններով երկու եղբայր, իսկ Վարդան անունով եղբայր չի ունեցել:

Հենց այս փաստն էլ նկատի ունենալով՝ Գ. Զարբհանալյանը գրում է. «Խրատը» Նարեկացուն չըլլալուն գլխաւոր ապացոյցն ալ այն կերնայ, որ Վարդան անուամբ եղբայր չունէր Նարեկացին»¹⁸:

Նույն տեսակետն է հայտնել նաև Ե. Դուրյանը. «Վարդան անունով եղբայր մըն ալ չէ ունեցած Նարեկացին, անհարազատ պէտք է համարել իրեն ընծայուած «Խրատ դաւանութեան» ընդարձակ գրութիւնը, որուն ոճն ալ արդէն չի կրնար Նարեկացիի ոճին համեմատուիլ»¹⁹:

Ըստ նոր Հայկազյան բառարանի՝ «հարազատ» նշանակում է.

ա) համահայր եղբայրներ.

բ) ազգակից, մերձավոր.

գ) հոգևոր եղբայր²⁰:

Ուստի, Գրիգոր Նարեկացին և Վարդան դիվանադպիրը կարող էին լինել հոգևոր եղբայրներ:

Բայց պատմագրական որևէ աղբյուր չի հաստատում նաև այն փաստը, որ Մենքերիմ Արծրունին Վարդան անունով դիվանադպիր է ունեցել: Ուրեմն, հերքելով Նարեկացու և Վարդանի եղբայրակցությունը և Մենքերիմ արքայի պալատում Վարդան անունով դիվանադպրի առկայության ենթադրությունը, հերքվում է նաև «Խրատի»՝ Գր. Նարեկացու հեղինակություն լինելը, մի հանգամանք, որ ինքնըստինքյան ենթադրել է տալիս, որ Վարդանը Ժ դարում ապրած անձնավորություն չէ:

2) Պ. Խաչատրյանը «Խրատը» համարում է գործ այն Գրիգորի, ով գրել է Մարիամ Աստվածածնին նվիրված ներբողը: «Մեզ թվում է, որ դրանք միևնույն հեղինակի՝ Գրիգորի գործերն են, տարբեր Սկևռացուց: Ի միջի այլոց, նրանց հեղինակի նույնության օգտին է խոսում Եղիշեից վերցված հետևյալ ոճական դարձվածքը, որ հանդիպում է երկուսում էլ այսպես. «Եւ արդ սկսցուք, ուստի սկսանել է արժան...»²¹: Գրիգոր մենավորին Պ. Խաչատրյանը նույնացնում է Գրիգոր Մեծ Վկայասեր կաթողիկոսի հետ: Ըստ այս վարկածի՝ Վարդանն էլ նրա զարմիկը պետք է լինի՝ Վարդան Հայկազնը, որը Գրիգոր կաթողիկոսի մահվան առիթով գրված ողբի հեղինակն է: Պ. Խաչատրյանի ենթադրությամբ՝ Վարդանը ոչ թե արքունական քարտուղար է եղել, այլ կաթողիկոսարանի ատենադպիր²²:

Նախ ընդգծված ոճական դարձվածքի մասին: Նկատենք, որ Սկևռացու երկու գործերում՝ Ներսես Լամբրոնացուն նվիրված ներբողում և Գր. Լուսավորչին նվիրված ճառում, որոնց հեղինակային պատկանելությունը լիովին անկասկածելի է, ևս

¹⁷ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե., Երևան, 1962, էջ 79:

¹⁸ Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 548:

¹⁹ Ե. Դուրյան, Վարդան անունով դիվանադպիր, Երևան, 1933, չգ 172է

²⁰ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Բ., Երևան, 1981, էջ 59:

²¹ Պ. Խաչատրյան, նշված աշխ., էջ 144, ծանոթագրություն:

²² Նույն տեղում, էջ 145-149:

հանդիպում է նույն դարձվածքը: Համոզվելու համար բերենք այդ երկերի համապատասխան հատվածները: Այսպես.

ա. «Ներբողեան ի սուրբն Ներսէս Լամբրոնացի» երկում՝ «Եւ արդ ուստի՞ սկսցուք...»²³: Քանի որ այս երկը հռետորական-ճարտասանական բնույթի է, հարցն էլ տրվում է հռետորաբար:

բ. «Պատմութիւն վարուց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի» ճառում՝ «Եւ սկսցուք, ուստի սկսանելն է արժան, յառաջնոյ անտի արդարոյ և ի բնաւից պատուեցելոյ և յորս զկնի ցուցանելով զհաւասարութիւն, զառաւելութիւն և զնուագութիւն, ունենալով առ այն նեցուկ և զաւրավիզն մաղթանաւք պատուեցելոյս զի նմա հանգուցեալ շնորհաբաշխ հոգին»²⁴:

գ. «Բան գովեստի սուրբ կուսին Մարիամու» ներբողում՝ «Եւ արդ, սկսցուք ուստի սկսանելն է արժան, զհոգին իմաստութեան ունելով առաջնորդ մաղթանաւք պատճառի բանիս...»²⁵:

դ. «Խրատ»-ում՝ «Եւ արդ սկսցուք ուստի սկսանելն է արժան, ի դաւանութիւն հաւատոյն ճշմարտութեան, որ է հիմն և արմատ ամենայն բարեաց»²⁶:

Չորս տարբեր երկերից բերված համապատասխան հատվածների համադրումը համոզում է, որ չորսն էլ պատկանում են նույն Գրիգորին:

Ըստ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության»՝ Գրիգոր Մեծ Վկայասեր կաթողիկոսի դիվանադպիրը Գևորգ Լոռեցի վարդապետն էր, որին, Կ. Պոլիս և Եգիպտոս մեկնելուց առաջ, Գրիգոր կաթողիկոսն իրեն փոխարինելու համար կաթողիկոս էր ձեռնադրել²⁷: Վերադարձին կաթողիկոսի և Գևորգի միջև գծություն է առաջացել, արդյունքում կաթողիկոսը Գևորգին հեռացրել է, և նա ընդունելություն է գտել Տարսոնի Ապղարիպ իշխանի մոտ²⁸: Մ. Ուռհայեցին որևէ Վարդանի անուն չի տալիս: Եթե կաթողիկոսը Վարդան անունով դիվանադպիր ունենար, կարծում ենք՝ պատմիչն անպայման կարձանագրեր նաև այդ փաստը:

Եթե անգամ տարբեր երկերից բերված համապատասխան հատվածների ոճական նմանությունները կարող են որոշիչ լինել հեղինակային պատկանելության խնդրի լուծման համար, այդուհանդերձ, գլխավոր խնդիրը մնում է Վարդան դիվանադպրի ինքնության պարզաբանման հարցը:

Ինչպես տեսանք, «Խրատի» հեղինակային պատկանելության և նրա պատվիրատուի հարցում հայագետները տարակարծիք են: Գրիգոր Սկևռացուց բացի՝ այն վերագրվել է նաև այլ Գրիգորների՝ Գրիգոր Մեծ Վկայասերին, ավելի հաճախ՝ Գրիգոր Նարեկացուն: Ձեռագրերում «Խրատը» հանդիպում է և՛ Նարեկացու, և՛ Սկևռացու անուններով:

Ենթադրում ենք, որ Վարդանը ապրած պետք է լինի ԺԲ-ԺԳ դարերում: Այդ դա-

²³ Սոփերք հայկականք, ԺԵ., Վենետիկ, 1854, էջ 8:

²⁴ Վիեննայի Մխիթ. մատենադարանի ձեռ. 166՝ ՄՄ, Այլ վայրերի ձեռագրերի ժապավենների հավաքածու, 679, էջ 172բ-173ա:

²⁵ ՄՄ ձեռ. 6615, էջ 220ա:

²⁶ Գր. Նարեկացի, նշվ. աշխ. էջ 485:

²⁷ Մ. Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 126:

²⁸ Նույն տեղում, էջ 136:

րերում եղել են մի քանի Վարդաններ՝ Վարդան Այգեկցին, Վարդան Կիլիկեցին, Վարդան Բարձրաբերդցին, Վարդան Հաղբատեցին (մահացած 1194 թ.), այլ Վարդան Հաղպատեցի, որ Սանահինի առաջնորդ լինելու պատճառով կոչվել է նաև Սանահնեցի, ի վերջո՝ Վարդան Արևելցին:

Չնայած որևէ ուղղակի գրավոր վկայություն չունենք, բայց շատ հավանական ենք համարում, որ «Խրատի» խորագրի Վարդան դիվանադպիրը և Վարդան Արևելցին նույն անձն են: Մեր ենթադրությունը հիմնված է Կիլիկիայում Վարդան Արևելցու ծավալած գործունեության և դրանից բխող հետևությունների վրա:

Կիլիկյան Հայաստանում արքունի դիվանադպիրը բավական մեծ լիազորություններ ուներ. նրան վստահված էին արտաքին գործերը, նա վարել է դիվանագիտական հարաբերություններ, թագավորի անունից ուղարկել և ընդունել է դեսպաններ, կազմել և թագավորի հետ ստորագրել է պետական փաստաթղթեր, հրովարտակներ, օտարերկրյա պետությունների հետ գրագրություններ է վարել, նրա մոտ է պահվել պետական կնիքը: Արքունի դիվանադպրի գործը վարել է Սսի ընտրովի արքեպիսկոպոսը կամ օտար լեզուներ իմացող տաղանդավոր անձնավորություն²⁹:

Այսպիսի գործունեություն են ունեցել Գր. Սկևռացին՝ Լևոն Բ-ի, և Վահրամ Բաբունին՝ Լևոն Գ-ի արքունիքում: Նրանք թագավորական ատենադպիրներ էին:

Պետք է ենթադրել, որ Վարդանն էլ, Կիլիկիայում եղած ընթացքում, Հեթում Ա-ի արքունիքում զբաղեցրել է նույն դիրքը, որովհետև նրա գիտելիքները և ունակությունները շատ հարմար էին այդ պաշտոնին:

Վարդանը Կիլիկիայում գտնվում էր Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսի խնդրանքով և հրավերով: Փ. Անթապյանն իրավացիորեն նկատել է, որ Վարդան Արևելցին պետք է եկեղեցակազմակերպչական աշխատանքի փորձ ունենար, որպեսզի «Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսը հիմք ունենար նրա նկատմամբ ցուցաբերելու լայն վստահություն» և նրան հրավիրեր Կիլիկիա³⁰:

Ըստ նույն հեղինակի՝ Վարդանը Կիլիկիայում ապրեց ու գործեց տասը (1241-1251 թթ.), ըստ այլ աղբյուրների՝ հինգ (1241-1246 թթ.) տարի³¹:

Բայց այստեղ կարևորը ոչ թե Կիլիկիայում նրա ապրած տարիների թիվն է, այլ այն հասարակական-քաղաքական գործունեությունը, որ նա ծավալեց Կիլիկիայում միջեկեղեցական դավանաբանական բուռն վեճերի շրջանում:

Վարդան Արևելցին սերտ բարեկամական կապեր ստեղծեց Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսի և Հեթում Ա թագավորի հետ. կաթողիկոսի առաջարկով և նրա հետ Վարդանը հեղինակել է կանոններ և սահմաններ, եղել է 1243 թ. Սսի եկեղեցական ժողովի կազմակերպիչներից մեկը³²:

Լ. Խաչիկյանը նկատել է, որ «Խրատական» և «Շրջաբերական» թղթերը Արևելցին գրել է Կոստանդին կաթողիկոսի խնդրանքով³³: Բացի այդ, Վարդանը լավ տիրա-

²⁹ Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1976, ԳԱ հրատ, էջ 743-744:

³⁰ Փ. Անթապյան, Վարդան Արևելցի, հ. Բ., Երևան, 1989, էջ 6:

³¹ Նույն տեղում, հ. Ա., Երևան, 1987, էջ 38:

³² Н. Эмин, Всеобщая история Вардана Великого (предисловие), Москва, 1861, նաև՝ Փ. Անթապյան, Վարդան Արևելցի, հ. Բ., Երևան, էջ 16-17:

³³ Լ. Խաչիկյան, Կոստանդին Բարձրաբերդցու «Խրատական թուղթը». Բանբեր մատենադարանի, հտ.

պետում էր օտար լեզուների՝ հունարեն, ասորերեն, եբրայերեն, թուրքերեն, հավանաբար՝ նաև պարսկերեն, և կաթողիկոսի խնդրանքով կատարել է թարգմանություններ:

Նա Հեթում Ա թագավորի դաստիարակն էր, խոստովանահայրը և խորհրդատուն, մի հանգամանք, որ թույլ է տալիս ենթադրելու, թե Վարդանը, անշուշտ, մասնակից է եղել թագավորի պետական գործերին:

Վարդան Արևելցին քաղաքական-դավանաբանական պայքարի ակտիվ մասնակիցներից էր և որպես Հայ Եկեղեցու ճշմարիտ դավանանքի գաղափարախոս՝ կաթողիկոսի առաջարկով Հեթում թագավորի համար գրել է Հայ Եկեղեցու դավանանքը արտահայտող և «Ժղլանքի» մաս կազմող Թուղթը՝ որպես պատասխան և հերքում Պապի նվիրակ Դիմանջի՝ Հայ Եկեղեցուն ուղղված մեղադրանքների³⁴: Այս պատասխան Թուղթը Լ. Խաչիկյանը համարել է հայ դավանաբանական գրականության զուլխգործոց³⁵:

Վերոհիշյալ Թղթում Արևելցին ոչ միայն մեկ առ մեկ հերքում է Վատիկանի կողմից Հայ Եկեղեցուն առաջադրված մեղադրանքները, այլև թագավորին ողջախոհության կոչ է անում՝ չմոլորվելու ճշմարիտ հավատքից, որ այնքան կարևոր է ազգապահպանության տեսակետից:

Պետք է ենթադրել, որ միջեկեղեցական դավանաբանական խնդիրներով մտահոգված Վարդանը, որպես ճշմարիտ հավատքի գաղափարախոս, իր հոգևոր եղբայր Գրիգոր վարդապետ Սկևռացուն խնդրել է գրելու Հայ Եկեղեցու ճշմարիտ դավանանքը ներկայացնող այս երկը, իսկ Գրիգորը, որպես այդ դավանանքի գաղափարակից, հանձն է առել իրականացնելու իր հոգևոր հարազատի խնդրանքը: Նման պատվեր տալու համար Վարդանը Կիլիկիայում պետք է ազդեցիկ դիրք ունեցող մարդկանցից մեկը լիներ՝ արքունիքին կամ կաթողիկոսարանին շատ մոտ կանգնած հեղինակավոր անձնավորություն, մեր ենթադրությամբ՝ արքունի դիվանադպիր, իսկ Գրիգոր մենավորը, ինչպես որ ընդունված էր, իր երկը շարադրել է ըստ պատվիրատուի ճաշակի և քաղաքական կողմնորոշման:

4, Երևան, 1958, էջ 267:

³⁴ «Գիրք թղթոց», Երուսաղեմ, 1994 թ., էջ 657:

³⁵ Լ. Խաչիկյան, նշված աշխ., էջ 267: